*Կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսի առաջարկութեամբ Մայր Աթոռիս գանձարանից ուղարկուեց 200 ռ. Աստրախանի թեմական խորհրդին տեղոյն ասպատակութեան ենթարկուած հայերին ի նպաստ և 1000 ռ. Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին՝ տեղւոյն հրդեհից վնասուած հայերի համար։*

## Ստացուած գրեր

1, Վ. Փափազեան. Զրոյցներ, Շուշի. 1911. գինն է 50 կոպ.

2. Քրիստոնէական Հաւատ, Յոյս և Սէր. կազմեց Յովհաննէս աւագ քահանայ Մարտիրոսեան Թիֆլիզ. 1911. գինն է 30 կոպ.

## Պարբերական նոր հրատարակութիւններ.—

ԱՐԱԳԱԾ. *պատկերազարդ շաբաթաթերթ. ազգային, գրական, քաղաքական 1911. Նիւ-Եօրք։ Բաժանորդագին Թուրքիոյ մէջ տարեկան 60 ղրշ. վեց ամսից՝ 30 ղրշ. Արագած կը գտնուի բոլոր գրավաճառների և լրագրավաճառների մօտ։*